

արգէն շատ տաենէ 'ի վեր գիակ մը կը փնտուէր :

— Բայց այն վտանգն, որոյ մէջ գըտնուեցար՝ զքեզ չզարհուրեցնաց արդեօք :

— Անիկայ անցաւ գնաց: Բարեկամդիմ, աւելցուց քաղցրութեամբ Տօքթէօրըն, ես խօստացայ բժշկելու այս դրժրաղզները այնպիսի եղանակաւ մը՝ որ մէ շեմ կրնար բնաւ ետ կենալ. իմ մո-

ւեգնութիւնս ալ առ է, և գիտցած եղիր՝ որ մենք իմաստունքս ալ մեր խեն զութիւններն անինք. բայց առանց այս պիսի մոլեգնութեանց՝ մարդկային ընկերութիւնը չի կրնար բնաւ յառաջանց մը ըլլակ. ապա թէ ոչ՝ մարդիկ անոնց բոլորտիքը միայն պիսի խոնչէին, զդրութաղդը նպաստաւորած է անցաւոր հարսաւաթեամբ :

ՈՒՂԵ ԽՈՐՈՒԹԻՒՆ Ի ՊՈՄՊԵՅ ՀՆԴԿԱՅՑ

(ՏԵ՛Ս Էջ 140)

Համասուտ տևուրիւն Հնեկաստանի վաձառկանուրեան և ձարտարարեան վրայ:

Հնդկաստան՝ Արփոյ միւս ամեն երկիրներէն աւելի նշանաւորն է իւր նոխ ու զանազան բերքաբրովը: Աչ միայն Արփոյ բոլոր միւս քաղաքականացներ երկիրներաւնքերքնը միանգամայն կը գտնուին հոս, այլ նաև ուրիշ շատ մը զանազան տեսակ բերքեր որ միայն այս երկիրին յատուի են. Կուրծես բնութիւնը մասնաւոր առանձնաշնորհութեամբ իւր աշխուժին թափը այս երկիրս վրայ տպաւորած է: Գրիթէ բոլոր այս համեմեմզորս մարգակյնն փափկասփրաւինը ամենակարելոր ըրած է կենաց, ամեն տանեն այս երկիրս յատուի բերք եղած են. Եւ ոչ այսչափ միայն, այլ և հանդերձնացնաց երկու ամենակարելոր նիւթ, ինչպէս մետաքսն ու քամբակը, նախ և առաջ հոս սկսած են մշակուի, և գեռ ևս մո մշակութիւնը կը շարունակէ, թէպէտ և հիմա ուրիշ երկիրներ ալ տարածուած է: Այսպիսի բնորդի երկիր մը ճոխութիւնը յանցիշատակ ծամանակաց հետ միշտ գրգիռ մը եղած է սուր ազգաց՝ հետը վաճառաշահութեան կոտ մը հաստատուելու:

Առաջին Արարացքը կը համարին որ ծովու ալեաց դիմագրաւ դիմեր ին այս կողմերս 'ի խնդիր հնդկային բերոց, փոխադրելով ու վաճառելով զամոնք արևելքան վաճառանոցները: Եւ ասոր զարմանալու չէ, որովհետեւ 'ի հնուց ծանօթ է թէ ինչպէս Արարացքը ճարտար և յանդուգն նար արգողը էին և հմաււ վաճառականք: Ա-

րարիոյ թերակղզին իւր բնական կազմութեամբը, իւր ներքին միծ անապատովը և այն բարերեր հողերու կտորներովը որ իւր երկայն ծովափառնաց գրայ կը ձգին, և գործադիր անձունկ ծոցերովը որովք մէկ կողմանը կը բաժնուի յԱմիգիէէ, միւս սկոչմանէ Պարսկաստանն և 'ի Հնդկաստան, բնականակըս պատճառ եղաւ Արարացւոց ծովագնաց ծողովուրդ մըլլալու: Դարձեալ Փինիկեցիք, որ առողին վաճառականիք կը համարին 'ի Միջերկրականն, ազգակից ժողովուրդ մի էին Արարացւոց, և Սուսր Գրաց իսկ կկացաւթիւնը կը հաստատն թէ այս երկու ժողովուրդոց մեռքն էին արեւմտից և արևելյաց վաճառականներու թեսան բանալիքը, որք կարաւաններու միջոցաւ անապատը կտորելով Պարսկային ծոցէն և Սուէկէն սկսեալ մինչեւ ցիւրտու և ցԱմիդոն, Հընդկաստանի և Ջնանատանի բերքերը, համեմիք, գլուխկը, ոսկի և օսնին կերպաւաք, կը փոխանակէին Եւրոպիոյ երկրթի, անսպի, կապարի, արզնձի և արծաթի հետ: Անկայն այս ալ ամենաստոյգ է որ վաճառականութեան մէկ մեծ մաս մը բռն Հնդկաց Ճնուքն էր, թէպէտ և ոչ ոք կարող է հաւաստի ըստել թէ այն Հնդինը որ 'ի հնուց հասաւած էին իրենց բնակութիւնը Հնդկաստանի արեւմտեան ծովափունքը Ժիրացւոց հետ ազգականութիւն ունեցած շըլւան: Մաշաւրարի և կուզերացի հնաւանդ նշուզակութիւնէն հնար է առացցուցանել թէ Հնդկաստան ոչ միայն ընդարձակ վաճառականութիւն մ'ունէր, հապա նաեւ կարող էր յանդուգն եղուկակց խումբեր

ծովու վրայ թափել որ իւրեանց ատրուա-
տր եղազակութեամբ հոգան: Նմանապէս
թէ Հնդիկը 'ի հնուց հնոտէ յանդուքն նուա
արկող էին հաւասափ է այն առևնորդի ա-
նուններէն որ Ալրարից հարաւային ծովա-
փանց վրայ կը լուսին, և նուե այն հնդիկ
գաղթականութիւններէն որ 'ի կանուխ ժա-
մանակաց հետէ հաստատու ցանոն ի ոտհ-
մանս հնդիկային ովկիսանուսին ի անոն ա-
ծուկ ծովիրուն, և մինչև ցՄատակասքար, իրը
Երր նիւպուհր Գերբանացի ճանապարհոր-
դը 'ի 1762 Մօրք գնուց, հոն շատ մը Պա-
նիաներ գտաւ, որոնք կը ստորագրէ իրը
մեծ վաճառուհին և շատ արդարասէր: *

Տարակյոց չի վերցնեն, նաւարիութիւնը
իրը յԵրրու պայուսութեան վիճակի մէջ կը
գտնուէր, արեւելքը վերջի աստիճանին ծալ-
կած էր: Յարթիան սերունդոց բաւական
կը համարէին Միթերկրտկանին ծովափանց
քովէն քերելով ճանապարհորդել, անցնիլ
'ի Սպանիա և անիէ շրջինվ մդիլ մինչեւ
ըրբուանական կղզները, ընդհակառակն
դարերով յառաջ Ալրարացիք: Հնդիկը և
Զինացիք շատ աւելի վիճակառութ ծվագը-
նացութեամբ վիճառաշահութեան հնտա-
մուռ կ'ըլլային: Աւանդութիւն մի կառ, և
գուցէ ճամարփա բրայս, որ կ'ըսէ թէ հնդ-
կային ովկիսանոսին մէջն Ալտենէ յափունս
կուզերազի եղած անցը նաւափար մը զը-
տած է բատ դիպաց: բատ որում իր նաւար
հարաւային քամիէ մը բանուելով քուեր
է 'ի գերեւ հանելով իր բորդ ջանքը որ
զայն ետ գարձէ: Հնդկային ովկիսանոսը
եղանակաց կանանաւորութեան առաւելու-
թիւն մը ունի, որ չորս ամիս շարտունակ քա-
մին հարաւային արեւմտեան կողմէն կը շըն-
չէ, իսկ տարույն միւս մնար հրեսիսային
արմեխեան կողմէն: ասիւ կ'ըսնայ իրաւա-
պէս ինթազրուիլ թէ այս մնանաւորութիւ-
նը գրգիռ մ'եղած ըլլայ նուարկողաց եր-
կայն ճանապարհորդութեանց մեռք զար-
նելու: որովհետեւ յանդ քամի մը կրծար
թէ երթի ծառայել և թէ դորձի: Միթին
դարուն ժամանակիները Ալրարացիք Շնզիկ-
տացիք և Պարսիկ իրենց զինուորական
զօրութեամբը Զնդկանստանի ճանառակա-
նութեան տիրեցին: և թէպէտ կը յշուիլ թէ
Հնդկային Ովկիսանոսին մէջն թորդոգալ-
ցուց նախկին նաւագնացութեանց առաջ-
նորդը կուզէրազի բնակիչներէն էին, չ'
վերաց այսր ամենացնի բրոդոգալցի մատե-
նազիրը կը վկայեն թէ վշշտունութերորդ
դարուն վերջիրը հարաւային Հնդկանստ-
անի վաճառականութիւնը բոյորովին Մար-
րիտանացւոց մեռքն էր: Ըստ ասելու այ-
լուց, այս վաճառականութիւնը մեռք

լրովին ճաւերով կամ կորուաւաններով ի-
ցիպսոսի Սուլդանին սահմաններուն մէջն
կանցնէր, որու ձեռքն էր Ալորեստան մին,
չեւ ցԵրիատ և Ալարիոց մէկ մասու, իր նա-
ւահանգստից մէջ վաճառականներէն հա-
րիւրին հինգը կ'առնէր: իսկ Միթերկրակա-
նին մէջ կրկինը կ'անուուր ի վենետիկ-
ցուց, ի ձենովացւոց և ի Գաղպալանից, Ա-
սոնք էին իր զիւսաւոր եկամուտը: և իրեն
ու իր հպատակաց կործանունն եղաւ հնդ-
կային վաճառականներթեան ընդհատութիւ-
նը 'ի բորդոգալցուց, որոնք մահացու կորս
մը բացին ընդդէմ Մաւրիտանացւոց, ու
գուն շեզան մինչեւ որ բոլոր վաճառականնե-
թիւնը իրենց մեռք չառին: Սուլդանը զէնքի
գիմեց ընդդէմ բորդոգալցուց, ու Կարմիր
ծովուն մէջ ճաւատուուիդ. մը կազմեց ու
զրկեց անոնց դէմ 'ի Հնդկային Ովկիսա-
նուն դէպ ի կուզերագ: Այս նաւատորմը
ի սկզբան յաջողութիւն ունեցաւ, բայց
հուսկ յետոյ չարաշար յաղթուելով ջար-
գուեցաւ ի բորդոգալցուց: Այս Եզիդոսուու
ըրուն ժիգն որ Հնդկանստանի վաճառական-
ութեան մաս մը մեռք իրեւ բորդովին
ունեցն երսւ ցանեաց Եզիդոսուու տիբենլովի
'ի 1517, և այնուհետեւ արեւելից Երուպայի
հետ ըրած վաճառականութիւնը երեք եր-
կայն դոր Բարեյուսոց Գիտուն ճամրուծ
շարունակեց: մինչեւ որ վերջիր Սուլէզի
պարմանոցին բացմանը բարձական ճոյն ճա-
րան սկսաւ բռնել:

Պոմէկէի նաւահանգիստը կին ժամանակ-
ները ասլանով կայսրան մը շըլլալով փոքր
նաւաց, ոչ միայն փոթորկաց դէմ, այլ և
ծովային հինաց, այլ և այլ նաւահանգիստը
կը յիշուի իր վաճառականութեան ապա-
ւէն, ինչպէս կալիխան, որու չինուց մեծա-
գործ աւերսկները հիացմամբ կը յիշէ
1675ին այս կողմերը ճանապարհորդով մը:
կողինի յաջորդեց Դանա, որու համար
Մարրօրօսո խալացիք աշխարհազիրը յժդի
դարու այսպէս կ'ըսէ: «Դանա մեծ թա-
գաւորութիւն մըն է որ դէպ 'ի արևմտեան
կողմը կ'ինայ, և է մեծ թէ բատ տարածու-
թեան և թէ բատ ճոխութեանց ձողովլուր
գը կասպաշտ է, իրենց յատուկ մօսնա-
ւոր լեզու մը կը խօսին, և առանց մէկու-
մը հարկամու ըլլալու իրենց յատուկ թա-
գաւորն ունին: Պազիդը չի մշակուիր հու, և
ոչ այլ համեմթ. սակայէ մասնաւոր բերը
խուն մըն է, այլ ոչ ներման մեռք սեխանի-
կապաշտ ու անուն է վաճառականու-
թիւնը, անոր համար ալ շատ նաև և վաճա-
ռական կը դիմեն հու, ուսկից զանազան
տեսակ աղէկ կաշիներ կ'առնեն կը ստանին,

ինչպէս նուեւ տեսակ մը կրտա և բամբակ։ Նմանայէս վաճառականիք իրենց նաւերովը շատ տեսակ նիւթեր կը բերեն հոս, ինչպէս ուկի, արծաթ, պղինձ և ուրիշ փնտռուած նիւթեր թագաւորին հաւասութեամբը շատ մը երդզակի իրենց նաւերովը ծովը կ'ել-լին նաւերն աւարասելու. որոնք թագաւոր իրին հետ գանձրեալ են որ որչան ձի ժեռոքիրնին ինայ իրեն ըլլան, իրենց պահելով մասցորդ աւարը, թագաւորն անոր համար այս բանս կ'ընէ, որովհետեւ իր երկիրը ձի չի բերեր. մինչդեռ զրսէն բազմաթիւ ձիեր կը զրկուին ի Հնդկաստան. և յիրաւի չկայ նաև որ Հնդկաստան երթայ առանց հետո ձիեր տանելու. Թող ուրիշ շատ տեսակ վաճառաքններ - Պահան, Մարօրօրուին այցելութենէն քիչ մը եաքը, Մաշմետականաց ձեռքն ինչաւ. և որիշ ճանապարհորդ մը որ չորեկտուաստներորդ գարւն սկիզբները այց ենաւ քաղաքին, չորս կրօնաւորաց նահատականիթիւնը կը յիշէ, որոնք կրօնասիրութենէն մղեալ քաղըին դատաւորին առջեւ զիճարանեցին նախատելով այն զատաւորին և համարնեցից ունեցած անհական կարծիքը. Ասոր վրայ գատառ ուրոց կատղելով՝ անգութ տանջանքներով զիթենք սպանել տուաւ. Սակայն ինքն ալ իւր անզթութեանը պատճառաւ երկրին թագաւորէն յարսոր զրկուեցաւ.

Երբ ագու գար ետքը բրդողպացիք ափին ցին Դանային. և թէպէտ այն ատնն քազաք լի էր մզկիթներով, տաճարներով ու պարտէցներով, սակայն վաճառականութիւնը սկսած էր նուազիլ. և ծովահէնք թէպէտ գեռ ևս կը շարունակէին իրենց ծովային աւազակութիւնները, բայց ոչ ինչպէս յառաջ. Արիշ ճանապարհորդ մըն ալ կ'ըսէ, թէ անհօն ընթարձակութեամբ քաջարի մը մեծածոց աւերանինը գեռ ևս տեսնուէին հոն և թէ գեռ ևս 'ի Դանա կային 5000 ներկարարք թաւշի. Դանային վաճառականութիւնը անցաւ ՚ի Պասին, թէպէտ և Դանա գեռ ևս իւր կարեռութիւնը պահեց.

Սակայն հուսկ ուրեմն հարաւային Հընդ՝
կաստանի Երբափիյ Հետ ըրած վաճառա-
կանութիւնը ամփոփեցա 'ի Մուրատ, ուս-
կից վնտուուած Նիւթերն էին զիմաւորու-
րար լեզակի Ններլը, պղպղ զը, բորակը, ան-
թափ և գործուած մետաք, բամբակեղէնք
և այլ կերպա կերպ համապնակ, որոնք բոլոր-
ը Երբափա կ'ուզերէին, Բայ ասկէ՛ ա-
ռանձնականոց և գիմաւորապէս գտթթա-
կան Հայոց ձեռքն էր գոհարեղինաց վաճա-
ռականութիւնը, ուսկից վաճառողը մեծ
շահ կ'ընէին: Աականի բանած բամբակի

վաճառականութեան մեծ շարժում կար, և որպէս զի նաւողչէքի ծախուց գիրութիւն մը ըլլայ, եօթնետաններորդ գարէն սկսեալ մասնաւոր մեքենանիր հնարկու կտաւում եղան, որպէս զի բարիմակի ճնկ շլուզ տարածոցը պարփկցնեն:

Բայց վերջապէս բոլոր վաճառականութեան շարժմանքն ամփոփուեցան 'ի Պոմպէկ, որիր ընդարձակ նաւահանգստովը և նաւաշինութեան դիրութիւններովը քան ուրիշ ամեն տեղզերէ աւելի դիրութիւն կը մասաւոցնանէր մեծակառուց նաւուց. Սկզբան է հաւաք իր վաճառականութեան զվաւոր նիւթեակարէ, որմէ մեծ մաս մը կը զրկէր 'ի Զինատան, առնելով անհէ փախարէն շաքար, հիւսած լաթեր և ուրիշ ուրծածներ:

Մինչեւ ց1813 Պոմպէյի բոլոր վաճառաւ-
կանութիւնը Արևելքան Հնդկաստանի ըն-
կերութեան ձևոքն էր. որու գաղնագրու-
թիւնն էր Անգղիական պետութեան հետ-
որ Անգղիայ ընթացքու ու գործանենք, ինչ-
պէս պղին, ոգեգէն ըմբկլիթ, գանակա-
դրութեան ամեն նիւթ, ըրդեղնենք և ինչ-
նիւթ որ պատշաճ էր Պոմպէյի վաճառանո-
ցին, Անգղիայցն Հնդկաստան առանի իրը
օգնութիւն անգղիական գործարանաց, իսկ
Պոմպէյէն յԱնգղիա տարած ընթացքն էին
բամբակ, փղոսկր, պղպեղ, լաթեղէն, շա-
քար, բորակ և ըստ զիվաց մօքա քափէ:
իսկ առանձնն վաճառականք շատ քիչ
կային 'ի Պոմպէյ, որովհետեւ ընկերութիւ-
նը արգելեց կը գնէր առանձնականոց վա-
ճառականութեանն: Խոյց 1813ին ընկերու-
թեան բոլոր առանձնանորհութիւններ վեր-
ցուեցան և ընդհանուր վաճառականութիւ-
նը ազատութիւն ստացաւ:

Այսուհետեւ բամբակի առուտութը ըստ տեղայսա զիմանալու միմբն եղաւ, և տարուէ տարի երթարակ շատցաւ, մինչեւ Ամերիկոյ վերջի քաղաքական կուորին ժամանակ, Հինգ տարուան միջոցի մէջ (1860-1865) Տէ միջին սդէէպինի բամբակ տարուեցաւ Ի Պամպէկ: Եւ այսպէս մէծ հարսաւթիւն ժողովեցաւ ՚ի Պամպէկ, զլատարապէս աննոնց բավթ գրնոնդ իրենց առևտորութիւն ըրած էին զրամբակը և լաթեղէները. և այսուհետեւ ամենքն առհասարակ ամենայն հնարք սկսան մասակը նոյն հարցութիւնը օգտակար կերպով գործածելու Ամենը առհասարակ, սկսեալ ՚ի բարձրագոյն պաշտօնատեսքը մինչդ ցատորնագոյն գործակատարք, փոքր ժամանակի մէջ մեծ հարստութիւն գիգենու յուսով, սեղանսւթութեան ընկերութիւններ սկսան հաստատեն, նոյն ժամանակու նաև չոգենաւուց ըն-

կերութիւն մը կազմեցաւ 'ի Պոմպէյ, որպէս որ Պոմպէյի վաճառականք աղատին Անդիհացի չոգենաւուց տերանց ձեռքէն Եւ այսէս ամեն մարդ այս ընկերութեան թղթերը վնասուելու հետամուտ կ'ըլլար. մանաւանդ որ ընկերութեան հիմնադիրը մեծ համբաւ ճգած էին իրենց ճարտարութեամբ ըլլ և բամբակի առևտորով ըրած շահերովը, նա մանաւանդ որ Ամերիկոյ բազմաքական կոփու դեռ ևս երկար ժամանակ տեղելու կը յուսացնէր: Անզանաւորութեան ընկերութիւնը երթալով կը բազմանային, որով հետեւ ամեն մարդ կուրօրէն ինքինքն նոյն շահախնդրութեան կու տար, յուսով մեծ շահու:

Դժբաղդաբար այս շահախնդրութեան սաստկութիւնը շատ չերկնցաւ. 1865ին գարնան հետագիր մը հասաւ աւետելով Ամերիկեան պատմաբազմին վերջը: Անմիջապէս բամբակին գինը գրեթէ կիսով շափ ինկաւ. այս անակնկալ գէսքէն բոլոր շահախնդիր ընկերութիւնը մեծ հարուած մը առին. և այն անձինք որ իրենց չափէն գուրս շահախնդիր պայմանաց պարտաւորութեան տակ էին, անկարող եղան իրենց պարտաւորութիւնները հասուցանելու:

Նախ ե առաջ Փարսիի վաճառականութեան ընկերութիւն մը անանկութեան օրինակը տուաւ իրեք միջինի շախ պարտը թողով: Այս գէաքրը ողջոյն քաղաքը ահուղողով լցուց, և ամենը յատնի տեսան որ բազմաթիւ սեղանաւոր ընկերութեանց դրամագլուխը պարզ թղթագրամ էր: Եւ այս անանկ հարուած մը եղաւ որ բոլոր շահախնդրութեան չէնքը 'ի հիմնաց տապալց, ու շատ մը հզօր տունիրու կործանումն եղաւ: Այն սեղանաւոր ընկերութեանց շատը մէջտեղէն վեցցուցան, և միայն մէկերգու, որ գիտցեց էին իրենց շահը 'ի կիր առնոււ կանգուն մնացին: Եւ յետ այս ամենայն ծախորդութեանց բնական կու գար հարցնել, թէ այն ութսուն միլիոն լիրա սպէրինը որ հինգ տարուան միջոցի մէջ Պոմպէյ քաղաքը մտան, ինչ եղան կամ ուր գնացին, բնական է որ նոր ժամու մը ստորին վաճառականաց ձեռքն անցած ըլլան, փոքր վաճառականիք որ յայտնի կերպով մէջ տեղ չեն երենար, և որոնք կամաց կամաց երկրին ներսէրը ցրուած են զանոնք:

Սակայն այս ալ ստոյդ է որ այս ձախորդ ժամանակիս շահախնդրութեան աղիտից սարսափը, թէպէտ և հարուած մը եղաւ Պոմպէյի վաճառականաց, այլ ոչ յարատել շարունակեց: Բամբակի առևտուրը չդաշտարցաւ, այլ նա մանաւանդ տասը աարի

ետքը յայտնի տեսնուեցաւ որ դուրս տարուածին չափը շատցեր էր:

Վերջին ատեններս նմանապէս սկսան 'ի Պոմպէյ բամբակի հիւսուածոց մեծ գործարաններ հաստատել, հզօր կերպիւ մրցելով ընդգէմ այնց հիւսուածոց որ կը բերուէին յԱնգղիոյ: Եւ արդ բազմաթիւ գործարանաց ծխնելցողք քաղիս շրս կողմէ գէպ ի վեր ցցուած ողջոյն օրը կը ծխեն, հապարաւոր բնակաց ապրուատը մատակարարելով: Ամեն հատակի արք, կանայք, տղայք, աղջկունք այն գործարանաց մէջ կը զրադին, թէ 'ի շահ անձանց և թէ գործարանաց տեարց, որովհետեւ օրական ոչինչ վարձով կը գոհանան: Զափաւոր մեծութեամբ գործարան մը մինչեւ հազար հոդի կը քաղնեցնէ. աշխատութեան ժամերն առաւուսնան վեցէն մինչեւ երեկոյին վեց, մէկ ժամ մը միայն հանգիստ չնորդելով կերպարոց համար: Այս գործաւորաց ամսական վարձքն է այսպէս.

Տղայոց և կամ աղջկանց. Ուուփի 5
կանանց » 8
Արանց » 16

Եւ այսպէս հիմա Պոմպէյ Հնդկաստանի վաճառանցներուն մէջ Մէնչսօգրի հետ կը մրցի. և այս բաւական չէ, հապս նաև իւր հիւսուածները Հնդկաստանն ալ դուրս կը զրէի. վաճառականութեան ճիշդը կենդանացնելով որ քանի մը տարի առաջ բոլորովին ննջուած էր: Այս հիւսուածոց երեք քառորդը կը զրկուին 'ի Զինաստան, և մնացածը յԱրարիա և յԱփրիկէ: Խակ գորս զրկուած հիւսուածոց զինք կը հասնի մինչեւ 267, 227 լիրա սպէրին:

Բամբակին ետքը Պոմպէյի վաճառականութեան էական նիւթ մըն է ափինը. որ մէտ տարին հնդէն մինչեւ վեց միլիոն սուերինի շափ դուրս կը տարուի: Այս վաճառքը Մապա միջնին Հնդկաստանի գաւառէն կու գայ, ուր տեղ մասնաւոր մշակութիւն կ'ըլլուի, մասամբ մը տեղացւոց գործածութեան համար, մասամբ ալ 'ի Ռաճփուղան և 'ի կուզերադ գոխագրելու: և է ընտիր յոյժ:

Սիփիննէն ետքը կու գայ ցորենը, որ կը մշակուի զինաւորաբար 'ի Նուրպատաճորն և 'ի կեղրունական գաւառու:

Խակ միւս բերերն որ դուրս կը զրկուին այսպէս կը նշանակեմք:

Հնդկաստանի բերը

Գաֆէ.

Անթափ բամբակի.
Բամբակ հիւսած և ոլրած.

Հեղկաստանի բերք

Օտար բերքեր

Գունատու նիւթեր .
Հնգեղէնք .
Կաշի և մորթք .
իւզք .
Տեսակ տեսակ հունտեր .
Համեմունք .
Բուրդ, չբանած և հիւսուածներ .
Եալեր .
Ուրիշ նիւթեր .

Բամբակ հիւսած և ոլրած .
Զգործուած ժղոսկը .
Պարէնք .
Մնտաքս, չբանած .
Շաքար զտած և չզտած .
Ուրիշ նիւթեր .
Արծաթ .
Ոսկի . և այլն :

Ներս մտած եիցրերն են

Զգեստեղէններ .
Հէնքեր ու պատերազմի պաշարներ .
Հէնքի և ճարուարապետութեան նիւթեր .
Կահկարասիք .
Ճրագներ ու մոմեղէններ .
Ժամահար ու ժամացոյց .
Ածուխ .
Ապակի .
Խէժեր .
Դասակագործութեան նիւթեր .
Հրազէնք .
Կաշիներ ու մորթեր .
Գործիներ ու կազմաձներ .
Փղոսկը և փղոսկեայ գործածներ .
Գուշարեղէնք .
Ըմելիք, ինչպէս գարեջուր, և այլն .
Ոգելիք ըմպելիք .
Գինի .
Մերենաններ .
Բամբակ հիւսած և չբանած .
Լաթեղէններ .
Քիմիական նիւթեր .
Դեղորայք .
Ներկիշ նիւթեր .

Բրտի և յախճասլակեայ անօթներ .
Պաշտրներ .
Երկաթուղւոյ նիւթեր .
Մնտաքս, չբանած .
Լաթեղէններ .
Համեմբ .
Շաքար զտած և չզտած .
Ջայ .
Մնախոտ .
Հովանոցներ .
Բրգեղէն հիւսուածք .
Ուրիշ տեսակ նիւթեր .
Ոսկի .
Արծաթ .
Մնտաղներ, ինչպէս Պղինձ, Երկաթ, Կապար, Սնդիկ, Պողպատ, Անագ, Զինդ .

իւղեր .
իւզաներկ գոյներ .
Թուղթ և ստուարաթուղթ .

Այդ Պոմպէի վաճառականութիւնը շատ ծաղկեալ վիճակի մէջ կը գտնուի թէ նկատ .
մամբ ներս բերուած նիւթոց և թէ անոնց որ գուրս կը տարուին: Տարուէ տարք միշտ յառաջադիմութիւն կը տեսնուի, որուն յայտնի ապացոյց է ընդարձակ նաւահան .
գրստին մէջ շարունակ գտնուած բազմաթիւ ընկերութեանց լողինաւք. յորոց գըլխաւորագոյնքն են անդպիսական բէնինսիոււ .
լար թղթարեր ընկերութիւնը, Աւաստիոյ Լուսոր, Խուսկի Ռուսագինօն, և այլ Գաղ-
դիք և Ամերիկոյ շոգենաւք:

Քաղաքին արհեստաւորաց խսկ ճարտա-
րութեան առջին ընդարձակ ասապարէզ մը
բաց կայ և այլ միջացք, իրենց գոր-

ծածները չնդկաստանի ներսերը դրկելու .
Լաթեղինաց տպողներու բազմութիւն մը
շարունակ զրաղած են բնիկ ժողովրդեան
գործածած ծածկոց լաթերուն վրայ ջարդեր
գրոշմելու, որ շատ շահաւոր արենսա մին
է: Ոչինչ նուազ են և ներկարարք. այն
պէս որ Պոմպէի գործարանաց հիւսած լա-
թերուն մեծ մասը հոս քաղաքս կը ներ-
կուին, զարդերով կը դրոշմանին, և այնպէս
երկրին ներքին վաճառանոցները կը զըր-
ուին: Եւ որովհետեւ առհասարակ ժողո-
վուրս կերպ կերպ գոյներով և ոսկեթել
զարդերով կը սիրէ զարդարուի, թէպէտ
և գործածած սովոր զգեստաք ամենապարզ
են, քայց և այնպէս չեն պակսիր ոսկեզարդ

բանուածոց արհեստաւորք, որոց գործը ամենաշահաւոր է:

Թղթի գործարանք իսկ կան, այլ աննշան, ու միայն տեղացւոց պիտօյից ծառայող՝ հասարակ թուղթ մը կը պատրաստեն. Աւելիայն տպագրութեան կարեոր եղած թուղթը, որու պէտքը օր աւուր երթավոլ կը շատնայ, գեր ևս գրսէն կու գայ, որովհետեւ գեր մասնաւոր գործարան մը չիա:

Կաշե գործութիւնն իսկ իւր գործաւորաներն ունի, թէպէտ և կաշին պատրաստելու արհեստը յառաջացած չէ. Հեղանիւթոց տիկի, ձիու սանձ և թամբ, կօյիկ, վահան, սնառուկ և ուրիշ տեսակ կահեր կը շննեն:

Երտի արհեստը միայն հողէ հասարակ ամաններու շնորհեանը կը զրադի, որ աննշան գործածք են, և միայն աղքամ ժողովրդեան պիտօյից կը ծառայեն, ոյք բաւական միջոց չունին պղնձեայ ստումաններ գործածելու: Ապիկերու արհեստը որ իսկ կը զրադանքն մտուցին կամ ծաղկեցուցին, շատ ինկած է, թէպէտ և կիմաշատ ջանք կը լընեն միւսանդամ ծաղկեցնելու:

Ոսկերչաց գասր բազմաթիւ է և յոյժ շահաւետ գործ մի է ըրածնին. որովհետեւ մեծ գրգիռ մըն է արհեստին յառաջադիմութեան ամեն քասու ժողովրդեան փոյթը՝ որ իրենց աղջկունքը, ազաք ու կանաքը ոսկեայ և արծաթեայ զարդերով զոցցես վերէն 'ի վայր կը զարդարեն. անոր համար այլ ժողովրդը իւր ճնուութեան և հակուց մեծ մաս մը այս զարդերու կը գործածեն: Այսու նպատակաւ սովորութիւնն է որ այն մետաղին քանակն որ այսպիսի զարդերու շինութեան պիտի գործածուի, արհեստաւորին ձեռքը կը դրուի. և արհեստաւորն այն մետաղը կը սեղով իւր աշխատութեան փորձարէն իւրաքանչիւր դորա չափին 8 անայէ մինչև. 2 կամ 3 ուսուցի կ'առնու: իսկ ռամիկ և աղքամ ժողովրդը հասարակ մետաղէ և ապակիէ զարդեր կը գործածէ: Այս ոսկեայ և արծաթեայ զարդերուն գործուածքը ձեռքով է, և ստէպ շատ ընտիր ու ճոխ ձեռագործ. Պոմակէ քաղաքին մէջ 2875 ոսկերիչ կայ, որոնք շարունակ աշխատութիւն կը գտնեն:

Գոհարեղինաց վաճառականք են 303 թուով. Ադամներ առառառութեամբ կը գտնուին, և ստէպ շատ գեղեցիկ. ասնոց շատը Հնդկաստանի այլ և այլ կողմերէ կու գան: Ճոխիք 'ի բնիկ Հնդկոց այս գոհարեղինաց համար շատ ստակ կը ծախեն. որովհետեւ վերուստ 'ի վայր իրենք զիրենք կը զարդարեն մարդրիտներով, զմրուսանե-

րով, ադամանդներով և այլ ազնիւ քարերով. անոր համար ալ այս գոհարեղինաց գնոյն շատ հմտւաւ են:

Ասկէ տառ կան նաև այլ շատ արհեստաւորք պղնձեայ անօթոց, կառաց, երկիթ և պղնձի գործուածոց, փղոսկիր և կրիպի պատեանի ձեռագործաց և կերպ կերպ զարդարուն տիփոց. Այս յետինս մասնաւորապէս որ Պարսկաստանէն մոռցած են, Փարսից ձեռքը համբերատար արհեստամընէ, որք յոյժ գեղեցիկ ձեռագործներ կը չինեն, զորոնք Եւրոպացի օտարականք սուլ սուլկը զամանակներն իրենց երկիրը 'ի յիշտառակ տանիւր, Նմանապէս սանդալ փայտով և երենսութ տեսակ տեսակ ընտիր գործածներ կը շննեն, որ թէ աշքը կը շղզումն և թէ տանը մեծ զարդ կըլլան:

Բնդիանոր տեսորին կիմային: — Մեծագործորինք: — Փարսից տէրարինք: — Հեղիկ ժողովորդը և իւր կրօնական շարժմութը: — Վիկոնդիա տնկարանական պարտէզը: — Պոմպէյ բատ մասին սովորութեան: — Մաղձացափ զոն մը: — Արշափ մարդածախ և Պոմպէյ:

Այս միայն պատեհ ժամանակ 'ի Հնդկաստան ճանապարհորդելու՝ է ցուրտ եղանակը. որ կը սկսի Նոյեմբերէն և կը տեէ մինչև ցվերջ Մարտի: Այս այս ժամանակն է նաև պատշաճագոյն և առողջագոյն եւրոպացի գաղթականաց 'ի Պոմպէյ բնակելու: Անոր համար ալ բազմաթական կինաց մի միայն միջոցն այս է. յորում թէ քաղաքանեպ և թէ միւս պաշտօնամանքարք ինչպէս նաև ճոխը յեկաց և 'ի պարապուաց, իրենց ամարանցները թղոած՝ քաղաք կ'իշնեն բնակելու և գործելու:

Այս եղանակն է որ կը չնչէ հիւսիսային արևելեան քամին, ախորժենի ընելով Պամպէյի կլիմայն, բայց այս ցուրտ համարուած եղանակիս շնչած հողմը խոնաւ է և թուլացուցիչ մանաւանդ քան թէ զօրացուցիչ. որու աւելի զգայուն կ'ըլլան անոնք որ չոր կլիմաներու տակ վարժած են բնակելու. քայց և այնպէս ամեն եկաց ամենախորժելի եղանակ մըն է այս: Այլ հարկ է որ ամենաթեթև զգենուն ինչպէս սովոր են ընելու իրենց հայրենիքը ամենէն ջերմ ամիսները, Յորեկ ատեն և հովանիի մէջ ու երեք նուազ գտած եմ ջերմութեան աստիճանը քան գէն և 26 Ռէօմիւր: Սակայն այս աղէկութիւնը կայ որ երեկոյեան ատեն չերմութիւնը իշնելով անուշ ու զուկ քամի

մը կը ընչէ . մթնոլորտը կը զովանաց և կը տեսէ մինչեւ ցառաւուս : Այս երեկոյեան ժամանակն է որ ժողովուրդը կ'օգտեցնէ իւր զրուանաց ու շրջադարձութեանց :

Գիշերային զովութեամբ կ'անուշնայ նաև գիշերային քունը, եթէ չըլլան մժանց լեզունք որ զայն անհանգիստ ընեն : Ըստի և իր նախապահեստ զգուշութիւն, չկայ սուն ուր մահճակալք իւրեանց պահպանիչ վարագոյրք չունենան :

Ցորեկուան ջերմութեան սաստկութիւնը՝ դիմոյ մասնաւոր պաշտպանութիւն կը պահանջէ : Անոր համար ճարտարութիւնը հընարեր է տեսակ տեսակ ձևով սաղաւարտածն զիշարկներ, լայն եղերքով . ոյք որչափ տեղ նոյնչափ ալ օստակար են գըլուսը ընդգէմ արթզին կիցի բռնութեանը պաշտպանելու : Բայց ասկէ հովանոցն իսկ ամենազարենոր է . անոր համար ալ չկայ Եւրոպայի որ փողոցը ելլէ առանց ձեռքը հովանոցն ունենալու : Եւ նոյն իսկ բնիկ ժողովուրդը սովորած է հովանոցով պտըտելու, բայց ի ռամկէն, որ անտարբերաբար բաց գլուխ և բռափիկ սուիւք կիզիչ արևոտն մէջէն կը քայլ :

Սակայն ինչ որ ինձ գլխաւորապէս կը քաղցրանայ ՚ի Պոմակէ է այս յարատել ու շքել բռնականութիւնը որ ամեն ատեն այն կանառ ու ծաղկեալ տեղոյն դրախտանման երեսոյթ մը կու տայ . Զիք աելի զրուեցուցիչ բան չըջել ՚ի Պոմակէ, ՚ի Մալապար Հիլ, ՚ի Քօլապա և այլուր, ՚ի զնին այն բաղմաթիւ մշտագլար ամարանոցաց, այն շքեղ պարտիզաց, կանաչազարդ վայրից ու ծաղկոցաց որ մարդկային ձեռքն ու ճաշակը կանգներ է ու յարատել ճամարքը կ'ոռոգնեն : Ուր հապարումէկ բայսք, պտղաւէտ ծառը, ամեն եղանակի ծաղիկը բարգաւաճ կ'անեն յապշտիւն օտարականին : Եւ այս անգամար ողջոյն տարին, թէպէտ և մթնոլորտ և ոյք իրենց խառնակութեան և այլալութեան ժամանակն ունենան :

Եւ յիրաւի, աղէկ օդոյ եղանակը մինչեւ մարտի վերջերը կը տեսէ Այնուշետե մըթնողրած կը սկսի իր անձրեային փոթորկալից պատրաստութիւններն . բայց անկէ առաջ սաստիկ տաքերը կը կոփեն որ ամենայն եկաց կ'աղդեն քաղաքէն հեռանալ և ուրիշ հեռագոյն տեղեր ապաւինիլ : Հատք յերոպայի պաշտօնատեարց և ՚ի պարապողաց այս եղանակս կ'օգտեցնեն գառնալով . յերոպա : Իսկ այնք ՚ի գաղթականաց որ երկար բնակութեամբ և կամ ծննդեամբ դրեթէ տեղացի դարձած են, մերձաւոր զիւղեր կամ քաղաքներ կը ցրուին, և կամ

լեռներու վրայ քաշուած եօթը ամիս անզրազ հագտեամբ կ'անցունեն, մինչեւ նոյնմեր միւս անգամ զիրենք ՚ի Պոմակէ կանչէ :

Ցունիսի երկրորդ շարաթը զարմանակի կանոնաւորութեամբ մօնութեր կամ անձրեային եղանակը կը սկսի, և անձրեւ անընդհատ ամեն օր կ'իջնէ մինչեւ սեպտեմբերի վերջերը . անձրեւք սահանաց, որ հետո գնացողաց երթեւելը տաժանելի կ'ընեն . վասն զի կէս վայրիեան իսկ բաւական է փողոցը ահագիխ լիճ մը դարձնելու : Այս եղանակս աւելի անտանելի ընողը խոնաւութիւնն է կ'ըսեն : Բայց և այնպէս եղանակ կիսականատեսք կը վկայէ թէ չէ բորորդ վին զորոկ զրաբաէն . Վասն զի անձրեւք միշտ իրիկութեան դէմ կը գագարի, թոյլ տալով ժողովրդեան մէկ երկու ժամ գուրս շրջագայութեանց ելլերու :

Այս անձրեւք և սաստիկ ջերմութիւնն ճշգիւ իրենց որոշեալ ժամանակին կը գտարին, և եղանակը իրենց շրջանն ընելով ցուրտ անուանեալ, և զրօսալի ժամանակը կը բերին . և այնուկետե հինգ ամիս յարատեն ոչ այլ ինչ կը տեսնեն բայց եթէ միահերա կապարագոյն հապայու երկինք մը ամանու և անծորդ ամեննեին : Մի է նոյն արեւ անայշյալակ մէկ հորիզոնէն կը ծագէ և միւս հորիզոնը կ'ընկղզմի : Երկիրն որ ՚ի սկզբան անձրեւաց առաւտ արբեցուցմամբ ամեն դին կանաչութեամբ ու ծաղկով զարդարուեր էր, արեւուն միակերպ ու կիզիչ ջերմութիւնէն հետզեւտէ կը ցամաքի, կը հրկիզի, և ուր մշակին ճիզն անկարող է ջրեւու, կը չորանայ ու կը հերձոտի Սակայն ծառը իրեանց կանաչազարդ կամ դրեմը միշտ կը պահնէն, և իրենց յարատե կինդանութեան կանաչութիւնն է որ այս երկիր մշտնիննաւոր ամառուան կերպարանքը կու տայ :

Բնութեան գեղեցկութենէն գուրս՝ ՚ի Պոմակէ երկար գագարող օտարականին կարծես կամաց ամենայն ինչ հասարակ ու ուսմիկ կը սկսին երկնալ : Գուցէ ըսածն վրիպակ ըլլա, մինչցեր այլք քան զիս արգարագատութիւննաւակէն գուցէ հաստատեն թէ Պոմակէ աշխարհիս ամենէն գեղեցիկ և նշանաւոր քաղաքներէն մէկն ըլլայ : Բայտ էթ թէ Հնդկաց աշխարհին առաջն կարգի քաղաքն է, ըստ հասարակաց վկայութեան, և կան յիրաւի նորաշէն գեղեցիկ բնակարանք ասդիս անդին ցրուած, որ ընդհանրապէս արևելեան բնակարանաց կինքը կը կրեն . սակայն բնիկ ժողովրդեան սեփականեալ քաղաքը՝ հին, մութ, տգեղ

և կարծես վատառողջ տուներու կոյտ մընէ է, կարծես նախախնամութիւն մը ըլլալու է, եթէ կարսի է բաել, քամով արծարծեալ հրդեալ հրդեհ մը, որ այն երկանարա հնացեալ, աղտղել եւ աննշան տանա մէկուէկս մըոնի գիծը առնու լափէ, նորաչէն և առողջագոյն քաղաքի մը ասպարէզ բանալով:

Յայտ է թէ այս ըսածէս կ'որոշին Երուապացի գաղթականաց մեծագործութիւնը որ 'ի Ֆորդ՝ նախկին բերդը, Կառուցած են, կենք բնիկ ժողովրդեան քաղաքէն: Բայց և ասով իրենց գոթացի ճարտարապետութեան միակերպ ոճովը ացք կը յոցնեցնեն. Թող որ կարծես գոթացի ճարտարապետութիւնը անպատճան է Հնդկային կիւմային:

Տեղոյս մեծագործութեանց մէջն հարկ է իշել կաէսի իշխանին յիշատակարանն իմաստոր արձանը, զոր Վասուն նոր Հրէան կանգնել տուած է 'ի յիշատակ իշխանին այցելութեան 'ի Հնդկաս, և որու համար ծախած է 12,500 լիրա սդէրլին: Արձանիս բարձրութիւնը, սաքէն մինչև գագաթը, է գրեթէ տասուերկ անդղիական ոտք: Կըրանիդ քարէ մեծ պատուանդամի մը վրայ կանգնած է, որու բարձրութիւնն ալ է տասուուչոս ու կէս ոտք: Օիշխանը ներկայացուցած է զօրավարի զգեստով: Գուրիւը բաց, սաղաւարուը աջ ձեռքով վար բոնած 'ի նշան ողջունի: Պատուանդամնին երկու կողմէ կան երկու թափեռ քանդակներ, որք կը ներկայացնեն ընդունելութեան օրուան տեսաբաններ:

Զոյդ կաէսի իշխանին յիշատակարանին կու գայ գուցէ Հնդկաց կայսրուէւոյն յիշատակարան արձանը, ողջոյն ճերիւակ մարմարինէ: Յայսմ կայսրուէն ներկայացուցած է բարձր գաչու մը վրայ բազմեալ գոթական աշտարակի մը ամսէովանոյն ներքէ: Այս յիշատակարանին կանգնողն եղած է Հնդկի իշխան մը, որու համար ծախած է 18,000 լիրա սդէրլին:

Բաց 'ի վարչութեան գոթացի մեծակառոյց չէնքերէն, միւս Երուապացի գաղթականաց թնակարանը որ 'ի Ֆորդ՝ բնդհանրապէս արևելեան ոճով տանց կոյտ են, որ գրեթէ բոլոր Փարսից ստացուածք են: Փարսիք իրենց գործուէւութեամբը, իսրանայուղուանեամբը և աշամզութեամբը, ոյնչ դրասագիտութիւն կամին, գետին կը ստանան, տուներ կը կանգնեն և ծանր գնուլ Երուապացուց կը վարձեն: Հիմա Պոմակի տեսարք, որու գոթական աղքատ կարծես իւր ծոցը կը հրամի այլագենից խումբք կը յաճախեն 'ի լրում օրինական արարողութեանց: Վանի մը քայլ անդին կրակապաշտ Փարսիքն մշտաբաց տաճարն է, ուսկից անշիշաննելի հրոյ մշկաբոյը ողջոյն փողոցը կը ընու: Եւ 'ի պասկ ամսնային այս ամենայն կրօնից սրբավայրից միջոցին մէջ ցրուած կը տեսնեն քրիստոնէական աղօթատեղեւաց բազմութիւնը, որոց ճական կենաց քառաթե փայտը կարծես իւր ծոցը կը հրամի բայլագենից խումբքը:

Բայց աւելի նշանաւոր է երկու գտառց ժողովրդեան կրօնական աղօթասիրութիւ-

կան կեանքը, երկու կամ երեք սենեկօք, ամսական վարձէ կը բերէ 120-160 սուփի: Ասոր շամեմատոթեամբ կան քիչ մը աւելի մեծ տուներ, և գլխաւորապէս արքունիքին վրայ, որ ամիսը կը բերեն մինչև 4000 և աւելի սուփի:

Այսպէս բոլոր այս այլ և այլ չէնքերն և մեծագործութիւններն այնչափ տպաւորութիւն չեն ըներ նորեկին վրայ, որչափ այն անհամար ժողովրդեան բազմութիւնը որ գոյնզգոյն սոլուաններու նման կը զեռայ. և գլխաւորապէս բնիկ ժողովրդեան բազմաքին մէջ ուր տեղադրութեանը պատճառաւ վրայ խոնած կը բնակին: Ուրիշ մէկ մասնաւորութիւն մըն ալ որ մարդուս վրայ տպաւորութիւն կ'ընէ: և անսոց թաղական բաժանմունքները Պատակարգութեան նարեւութիւնը ատելութեան շափ արմատացած է մէջերնին, որոց հետեւանք է որ միւս իրարմէ որիշ բնակին: թէպէտ և առեւտրական կենաց մէջ հաղորդակից են մէկմէկու:

Այս ժողովրդեան վրայ տեսնուած գործուէւթիւնը, իրենց զգեստին մասնաւորութիւնը, իրենց շարժուածքը, իրենց վաճառականներին ձեռնարկը, և այն փոթը որով Քաղաքականութեան վիճարանութեանց կը մասնակցին, հետեւանք կը համարին անդղիական բաղարակիթ վարչութեան՝ որ կրցեր է իրենց վրայ անանն զօրաւոր կենանանութիւն մը տպաւորել:

Կրօնական շարժմունքն խեկ ուրիշ գիտաւոր տպաւորութիւն մը կ'ընէ օտարականին վրայ, որու ամեն քայլ առնելուուն, ամեն փողոց խոսութելուն մէշմէկ երկրապագութեան վայր իրենց ընդ առաջ կ'ելլէ: Հոս դից փատազարդ տաճար մըն է կոնաչ ու կարմիր ներկեալ, իր յատուկ դից պատերներովն, անիմաստ և այլանդակ արձան ներովն ու զարդերովը, և անշատուում երկրպագուած բազմութեամբը: Երկու քայլ անդին մահէտափանին միջիմբ կը կանգնէ, ուր լուրջ ջերմեւանդից խումբք կը յաճախեն 'ի լրում օրինական արարողութեանց: Վանի մը քայլ անդին կրակապաշտ Փարսիքն մշտաբաց տաճարն է, ուսկից անշիշաննելի հրոյ մշկաբոյը ողջոյն փողոցը կը ընու: Եւ 'ի պասկ ամսնային այս ամենայն կրօնից սրբավայրից միջոցին մէջ ցրուած կը տեսնեն քրիստոնէական աղօթատեղեւաց բազմութիւնը, որոց ճական կենաց քառաթե փայտը կարծես իւր ծոցը կը հրամի բայլագենից խումբքը:

Բայց աւելի նշանաւոր է երկու գտառց ժողովրդեան կրօնական աղօթասիրութիւ-

Ն. Ե. Այս գլխաւորապէս կը դիտուի մերձ
Դ հնմելի դաշտորէս ծովի զերաց, ուր բազ-
մութիւնը խուռն կը դիմէ մասնաւորապէս
արեւմտից ժամանակ: Մահմետականն ու
փարսին զիխաւորաբար այս աղօթասիրու-
թեան ցոյց կու տան հասարակաց առջին:
Փարսին գրեթէ աւուր ամեն ժամանակ կը
տեսնես որ բազմութեամբ ցրուած այն ըն-
դարձակ սելլույն վրայ, աղօթագլիքը ձեռ-
քը, մերթ ծունը և մերթ կանգուն բարձր
ձայնի իւր աղօթքը կը մատուցանէ ելլող
կամ մեռնող արեգին հանդէաւ: Բայց գլխա-
ւորապէս արեւմտից ժամանակ է որ այն զօ-
սաի ծովագին վրայ ամեն վիճակի, ամեն
սեռի և ամեն հասակի Փարսին կը զեռայ:
նոյն այն ժամանակ որ արեգը հորիզոնը
խոնարհելով ծածկուելու կը հանդերձի զի-
շերուան տեղի տալով ի՞նչ պատկառա-
նաց անհամատութիւն այն դիմաց վրայ, ի՞նչ
ժիկի ծափահարութիւնը, որչափ երկրո-
պագութիւնը, որչափ ողջողնք և աղօթք կը
մատուցուին այն լուսու աղքային, այն կեն-
սատու սկզբան՝ որ իւր չերմանթեամբը բո-
լոր բնութեան կեանը կը յնորդէ:

Հատոք ևս այն բազմութենէն քան զբացումս ջերմեռանդք իրենց սրտին թափը չզափելով՝ տեղատեալ ծովուն թաց աւագուտին վրայէն յառաջ կը խաղան ծովաջոյն մերձ. գոգցես համարելով թէ որչափ մերձագոյն մատչին խոնարհող լուսաստեղ, ոնցինք արդինաւոր կըլլան իրենց աղօթք. Հոն այն խոննաւ առաջուտին վրայ և մերձ՝ ի ջուրն իրենց երկրպագութիւնն կ'ընեն, ազօթքնին կը մատուցաննեն, ջրէն լի ափով կ'առնուն և երեսնին ու ճակատնին կը մերձեցնեն, և յետս ընդ կրտւնկն շնն գտանար մինչև լուսատու ջանը իւր երեսը իւսպատ չծածկէ.

Բայց մենք ասկէ անզին դարձնենք աշ-
քերնիս, 'ի Վկիտորիա տնկարանական հա-
սարակաց պարտէղը, որ Պոմագիչի ուրիշ
չեղեղ գրօսավայր մըն է, և որոյ կանգնումը
ոչինչ աւելի կը Հայուէք քան գրսան ամէն
Տեղում գեղեցիկութիւնը վայցիլու կայսրի
հարկ է կամ առաւատանց կանուու կայցելել
և կամ ողոքեկուան տորոս ժամին կարա-

Մարդ մերձ, ի ձախակողմն, մեծ չէնք
մի՝ ընդարձակ թանգարան մին է ուր այ-
ցելուին տեսութեան կը պարզին երկրին
ամեն տեսակ բերոց և ճարտարութեանց
ցոյցը, բայց զլիաւորապէս ըռւսաբանա-
կանն ու հանգարանականը։ Այս բերոց մէ-
ջն զլիաւոր տեղին կը դրաւէ ամեն տե-
ղուոց և ամեն գաւառոփ բամբակից ցոյցը հան-
գերձ կերպ կերպ հնատեցինոր։ Խսկէ գու ըս-

Նշանաւոր են ընթի ճարտարաց ձեռագործք, և գլխաւորապէս փայտեղն չորուածք, բրտի անօթք, և տարագք զգիսաւոց այլ և այլ ժողովրդոց Հնդկաց:

Բրամա զինդաննաց մացորդք իսկ չեն պահասիր. և ես մասնաւորապէս նշմարեցի ծովային կենդանություն մը հսկայ կմաքրը, ուրոյ երկայնական թիւնն է յիսուննեւօթը անգոյիսկան ուոք, և ամեննէն ուռած տեղին՝ քսանուիրեք ուոք բոլորք:

Թանգարանէն ելլելով այցելուն ժողովը գրդեան բազմութեան հետ կը մողորի այն անստավիքի բր բուրաստանին բազմաթիւ շատիզներուն մէջ, և կամ Հսկայ ծառոց հովանին ներքե նստաքանաց վրա կը հանգ-չի 'ի դնին՝ ի՞նչ գրօսանք կը զգայ անզգան միտքը 'ի տես այնքան ծառոց վայելչա-զգեաս կանաչութեան. որ կիփէ արեւու մը տակ իրենց բուն կարեռու աճեցուցիչ տար-ը գտնելով՝ կ'ամին բարդաւան և իրենց արդիւնքներովը ամեն ատեն մարդկային փափկասիրութիւնը կը յագեցնեն, Ման-րաքայլ յառաջելով կ'ընթեռում այն հա-սարակածին յատու կ ծառոց անուններն, որ պառանձին պառանձին դրոշմած է իրա-քամչիւրին վրայ: Գրեթէ մեծագոյն մասը պտղատու են և արթաւենեաց ազգը նո-խարար կը ներկայացնեն:

Անդր քան զծառն այցելուին աչըք կը
հանգի այն հանաչազգեստ մարդագետնից
վրայ, զորս յառաւոտէ ցերեկոյ ուշադիր
մշակը իւր ճակտին քրամարք կ'ոռոգանձ.
Աշխատաւորաց բազմութիւն մը ամեն զին
ցրուած է այն ծաղկալից վայրը խնամեա-
լու և Յունակա ամիսն է, և սակայն ամեն
ազգի ք ամեն եղանակի ծաղկեկ կը տեսնուի
այն որդի որդի հոգէ անկորոնց վրայ, որոց
չորս դին կը բոլորէ դալարին, Ա.Ա. անկա-
րիլի է բառ գտնել բացատրելու այն ա-
նուշաբոյը որով լցուած է ողջոյն մթնո-
լուրը.

Բիւր Կերպին ջանացած է մարդկային ճար-
տարութիւնն այն վայրը գրօսալի ընելու .
լայն կանաչազարդ ծաղկալից պղոսացք ,
Հովանաւոր միջոցք , փոքր բարձրաւան-
դակի փոքր լիճք , ընտիր ծառերով ան-
տառախիտք , հազարումէի խալզեր այցե-
լուն միթքը գեղեցիկութեամբ կը յափշտա-
կեն ու վայրը անպատմենի կերպու կը քան-
ցրացնեն ի բամբութիւնը խուռն կ'ընթանայ-
ալս տեղոս , և գլխաւորաբար գաղթական
Եղոպացին , որ առ վայր մը այս հովանա-
ւոր ու ծաղկալից միջոցին մէջ աւուր նե-
ղացուցիչ Ծերմութեան տագնացք կը մո-
ռանայ . որոյ աշքին գուցէ աւելի շողոմա-
րոր գրօսաներ մը կը տպաւորէ այն այլ և

այլ Հնողիկ դասուց բազմութեան գոյնզգոյն զգեստներն, որ կանաչազարդ վայրին մէջ ցրուած շարժուն ծաղկիներու երևոյթ կը բերեն։

Պարտիզան մէկ փոքր մասը, արեւելեան վերջին ծայրը, սեփականեալ է վայրի դազանաց փակարանի։ Հնողաց բազմութիւն մը շարունակ բոլորած է այս գառագեցից չորս դիմ, ուր բանտարկեալ կը պահին անհատ ուսմէնք այն վայրի գազաններէն, որ քանի մը մղն անդին՝ ազատ բնութեան մէջ այնքան աղետալի են նոյն իսկ մարդուն։ Ասիւծ, վագր, յօվազ, արջեր, գայլեր, բորենիներ՝ զլաւուոր գազաններն են որ միշտ ուսմէնին հետարբերութիւնն իրենց կը քաշեն։ Սակայն քանի մը քայլ անդին է որ ժողովորդը աւել պահուու խոնած է մեծ երկաթապատ վանդակի մը առջին, ուր կապահանց բազմութիւն մը կերպ կերպ միմասական խաղերով վիճը կը զուարձացնեն։ Եւ ստկայն աչք մը տալով այն խառնիճաղանճին բազմութեանը, որոց մորթը սև կամ մութ գոյնին ամեն աստիճանի երանգ կը բովանդակէ, մտածութիւն մը կու գայ միտքս, թէ և անվայել. անշուշտ, կ'ըսեմ, յըւրազ կենդանաբանական պարտիզի մը գառապեկց շարունակութիւն մը շատ հետարբերական ըլլալու է այս այլ և այլ տեսակաց նախատիպքը հաւաքելու։

Տեղոյն խնամատարութեանը համար տարիկան եղած ծափքն է 10,000 ռուփի։ Այսչափ ծախքով կը պահուին քանաքենդ պարտիզական, տասուիրեալ աշխատաւոր կանայք, ութ տղայ և ուրիշ քանուինը աշխատաւոր։ Խսկ տեղույն ծախուած բերբերէն եղած ստակը 8,000 ռուփիէն աւելի է։

Ի Պոմպէյ երկու զիլաւուոր թատրոնք կան, որոց համար մասնաւոր թատրոնքակ ընկերութիւնք կու գան յԱնդդիոյ։ Բայց ասկէ կան նուև մասնաւոր սրահը երաժշտական հանդիսից և պարուց, ինչպէս նաև այլ և այլ քիչպէր։

Երկու օրական լրագիրը կը հրատարակուան անգիրակ ընկերութիւնք կու գան յԱնդդիոյ։ Միւսը թայմէր օվ ինտիմա։

Բաց ՚ այլ և այլ առևերտոց՝ քաղաքա զլաւուոր փանառաւեղի է արաքացի ձիոց, որ կը բերուին ասամկի Արտիբայէն, Բայց Պարկասատանէն ևս շատ ձի կը բերեն գաճառանոց։ Հեծնելու ձիերուն գինը կը տարրերի 300 ռուփիէն մինչև 1000 ռուփի։ Խսկ ճելլու ձիոց գինն է 350 ռուփիէն մինչև 900 ռուփի։

Ասանկ մեծ ու խոնած քաղաքի մը համար,

ուր ամենազդիք Հնողիկ մարդոց բազմութիւնը դիզուած կը բնակի, բնական է հարցնել թէ ասողնաբանական նկատմամբ ինչ փեճակի մէջ կը գտնուի։ Մաքրութիւնը առողջութեան պայմաններէն մէկն ըլլալով կարծես բնական կու գայ հետեցնել թէ հիւնդութիւնք անպակաս ըլլալու են քաղթես։ Այլ և այլ ամաց հաշիւները նայելով տարեկան մեռելոց գումարը կ'ելլէ իրեւ 1900 մարդ։ Յամին 1478 մեռելոց թիւը հասաւ 33,233, որ ամենէն բարձր թիւը կը համարին։

Գիւսաւոր հիւնդութիւններէն մէկն է մազձացաւը, որ տարին տասուերկու ամիս անպակաս է բնիկ ժողովրդեան մէջն։ Սակայն հիւնդութիւնս եւրոպացի գաղթականաց շատ քիչ կը գայիք. անշուշտ իրենց զգուշաւոր ապրուստին պատճառաւաւ բայց այս յետիններուս ալ եթէ երեք հափ, ազդեցութիւնը գրեթէ անմիջապէս մահագոյդ կ'ըլլայ։

Ինչպէս զիպաւ իսկ մի անդամ և եթ ցորչափ հոն գեղերեցի։ Եւ այս զիպաւ քաղաքին կառավարչին տիկնոջը, զոր զողցն քանի մը ժամու մէջ տարաւ։ Եւ որ ձախորդն էր՝ քաղթապալետին բացակայութեան ժամանակն եղաւ, որ ՚ի պարտուց պաշտաման ստիպեալ աշխարհին ներսերը կը ճանապարհորդէր, այնպիսի տեղ՝ ուր ոչ հեռազիր կը բանէր և ոչ երկաթուղի կը քալէր։

Դեռ ևս կը յիշեմ այն աղետալի գէպքը. բօթալի լուրը կայծակի պէս տարածուեցաւ քաղաքը, բոլոր եւրոպացի գաղթականաց միրուն ահաբեկելով։ Զարկ եղաւ մեռելցն դիակը զմասել, երեք կարգ պարկի մէջ ամրագինդ փափկել և մեծ զգուշութեամբ պահէլ մինչև զգալուստ քաղաքապետին։ Որ երեք օր ետքը տխուլ լուրն առնելով փութաց յուղարկաւորութիւնը հրամայելու։

Ողջոյն քաղաքը ոտքի վրայ էր. ժողովուրդը փողոցցոց և անցից վրայ կը դիզուէր այն ամսուր յուղարկաւորութեան ականատես ըլլալու։ Երբուսոցի գաղթականաց ընտրեագոյն մասը ներկայ էր հանդիսին։ ամենուն երեսը ցաւակցութեան տիրութիւնը կը կարգացուէր. կարծես ընտանիքի մը մէջն անձ մը պահսեր էր՝ բոլոր ընկերութեան սզի մէջ ձգելով։

Զարկ էր հանդուցելոյն զիակը հեռու հասարակաց գերեզմանոցը տանիլ, որ քաղաքէն երկու ժամ բացակայ է ՚ի Ահրի ըստուած տեղը, մերձ ՚ի ծով և ըլլի մը ուրբը։ Այս գերեզմանոցը երկու բաժնուած է. մին նորադանդից, միւսն ուղարկաւաց։ Քրիստոնէից չորրորդ գերեզմանոցն է ՚ի

Պոմպէյ. միւս երեքը քաղաքին մէջ գըտնուելով և արդէն լցուած ըլլալով, հարկ եղիր է այս հեռու տեղ չորրորդը կանգնէլ.

Միջօրէն ետքը զինուորականաց բազմոթիւնը քաղաքապետին տունը կը ծովով վեր, ուր կարգաւ շարուած էին նաև յուղարկաւորաց կառքերը. և ահա որոշեալ ժամուն յուղարկաւորութեան թափօրը նախայ կ'նլէր: Զիաւոր զինուորականաց խումբ մը գագաղակիր կառաց առջևէն ու ետևէն կ'երթար. որոցմէ ետքը ծանրաքայլ կը հողմէր կառաց բազմութիւնը: Ուսկից որ թափօրը կ'անցնէր՝ տիսուր լուսիթիւն մը կը տիրէր. ամենուն երեսը ցաւացիւթեան նշանք կը տեսնուէին:

Գերեզմանուն դուռն որ թափօրը հասաւ՝ մտից առջևը գագարեցաւ. ամենը կառքիւն իջան, և չըրու աստիճանաւոր զինուորականը գագաղը կառքէն վար իջնելով ուսերնին վերուցին ու ծանրաքայլ գերեզմանոցը մտուցին՝ յառաջելով մինչեւ փոսը: Հոն բոլոր յուղարկաւորք չորս դին պատեցին, և երեք անգղիացի եկեղեցականք փոսին վրայ համառօս աղօթք մը կարագու՛ գագաղը մէջը իջեցուցին, և անմիջապէս մեռելաթագք հողով ծածկեցին:

Տիսուր հանդէսին ներկայ էր նոյն իսկ քաղաքապետն. առոր երեք եկեղեցականք դառնալով լուելեայն ցաւակցութեամբ ձեռքը սեղմեցին ու մեկնեցան: Անոնց հետեւցան նաև յուղարկաւորք, յորս կային ևս և բազում փարսի մեծուէի տիկնապք. և քիչ մը ետքը տեղին միւսանգամ իր լուսեթեան կերպարանք զգեցաւ:

Երկրորդ օրը լրագիրը թաղման ստորագրութիւնն ընլով կի խօսքն այսպէս կը լմացնէր: «Այսպէս կատարեցաւ թաղման հանդէսը. այնպիսի սրտաշարժ ու գեղեցիկ արարողութեամբ որ քան զամենայն արարողութիւնն գեղեցկագոյնն է»: — Եռորդիւն ես բաց ՚ի լոիկ թափօրէն և երեք եկեղեցականաց ներկայութենէն ուրիշ արարողութիւնն մը չմեսայ, համարեցայ թէ տեղացի այլակենից արարողութիւնները կը հասկնար:

Երեք օր ետքը նոյնպէս մաղմացաւով կը

կը շարունակուի

մեռնէր նաև նոյն քաղաքապետին եղագորդորդին իսկ:

Արդ եթէ ոք ՚ի Պոմպէյ այլ և այլ չիրմաց տապանագիրները հետաքրքրելով կարդայ, չի կրնար միրտը ներքին երկիւղի մը զգացաւ մուքէն պահէլ: Գրեթէ ու ուհասարակ այն շիրմաց ներքին յաւիտենական քունընջողք երիտասարդ հասակին մէջ աշխարհը թողած են. շատ սակաւաթիւ են անոնք որ յիսնամեայ հասակը հասնելու կարողացեր են: Այսպէս մարդածախ է աշխարհս և մահագոյց Եւրոպացւոց. մանաւանդ անոնց որ ցուրտ կիմայից ծնունդ են:

Անոր համար ամենայն Եւրոպացի մեծ փոյթ ունի՞ որ քիչ ժամանակի մէջ խնայութեամբ ու աշալիջութեամբ տնիւլով գրամ հաւաքէ, և ըստ կարի փութով այն երկիւն հեռանայ: Այս պատճառաւ նաև վարչութեան պաշտոնատեարց և զինուորականաց թուակը բարձր է, և իրենց ծառայութեան ժամանակն իսկ նուազ քան անոնց որ յԵւրոպ կը ծառայեն:

Սակայն այս ալ զիտելի է, որ բաց ՚ի վարչութեան պաշտոնիկց ուրիշ Եւրոպացւոց ու բազգանինդրաց շատ գծուարին է այն կողմերը գործ գտնել: Այս իսկ վարչութեան Եւրոպացի պաշտոնատեարք, սահաւաթիւ են, և մեծ պաշտպանութեան պէտք ունին վարչութեան գործոց մէջ մըտնելու: Ուստի և կը զիտուի որ աւելի գործ փնտող Եւրոպացի մարդ կայ ՚ի Պոմպէյ, քան թէ բուն զբաղեց գործ: Որով շատ երիտասարդք որ շահու ակնկալութեամբ զնացած են այն կողմերը իրենց յոյսը ունան ելու տեսնելով, դոնէ զուռ կը պտըտին կամ օգնութիւն խնդրիլու և կամ ունայն տեղ գործ խնդրելու:

Գվասաւոր պատճառն է որ աելացիք սահկաւաթիւով ըլլալով թէ կիրակոյ, թէ հանդէրծի և թէ ուրիշ ծախուց նկատմամբ, ոյինչ վարձեռք կը գուշանան: Ուստի և ամեն գործատեարք, փաստաբանք և վարչութիւնն իսկ, իրենց շահաւորագոյնը փընտուել, լաւ ևս կը համարին բուն բնիկներէն առուու իրենց ծառայութեան մէջ, քան թէ Եւրոպացի գործածել՝ որոնց պահանջը աւելի ծանր է և փոյթը նուազ:

Հ. ՅԱԿՈՎԱՆ Վ. ԽԱՎԱՐԵՏՅԱՆ